

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ա Տ Ե Ա Ն Ա Զ Ա Ն Ի Կ Ա Մ Պ Ա Ն Ի Ա

Վ. ՈՀ.

Ի Ն Չ Պ Ե Ս Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Ե Լ
Ս Ո Յ Մ Ր Յ Ո Ւ Մ Ը Յ Ե Վ Յ Ա Ր Վ Ա Ժ Ա Յ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը
Կ Ո Լ Տ Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ո Ւ Մ

331.87

0-45

Դ Ե Ց Ց Ո Ւ Ա Տ • 1 9 3 1 • Յ Ե Ր Ծ Վ Ա Ն

331-87
0-45

15 JAN 2010

ԱՐ

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵԾ ՑԵՌԱՆԴԻԾ

Սոցմբումն ու հարվածայնությունը վերըին տարիների ընթացքում լայն ծավալ են ստացել թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության մեջ Մորհրդային Միության բոլոր անկյուններում։ Սոցմբումն ու հարվածայնությունը ցույց տվեցին, թե ինչ հսկայական տնտեսական հնարամորություններ են թաղնված մեր յերկրում և թե ինչ անսպաս յեռանդ ու հախաձեռնություն կա բանվոր զառակարգի ու աշխատավորական դյուղաշինկան մասնակիրում։

Սոցիալիստական մրցությունը մի հոր միջոց և աշխատավորության ուշադրությունը կենտրոնացնելու համար կուսակցության առաջադրած հիմնական իրադիրների կատարման վրա, բարձրացնելու նրա յեռանդը ժողովրդական տնտեսության օ-ամյա պլանը կատարելու և գերակատարելու համար։

Սոցիալիստական մրցման դարսիարը, վորը հացել եր լենինը, լայնորեն ծավալից քաղաքում, արդյունաբերության մեջ Տուլայի մետաղագործների գիտութիւնը հետո։ Այդ գիտումն արձագանք գտավ նաև գյուղում, հատկապես խորհրդային ու կոլեկտիվ տեսություններում։

Մեղ մոտ Հայաստանում նույնպես սոցմբումն ու հարվածայնությունը շոշափելի ու լուրջ արդյունքներ են տվել։

Սոցմբման ու հարվածայնության շնորհիվ անցյալ

3



Հ 24158-60

տարվա համեմատությամբ ազելացել և աշխատանքի տրտադրողականությունը, ինչև և ինքնարժեքը, լովացել և արտադրանքի վորակը, բարձրացել աշխատանքային կարգապահությունը, բերքատվության տոկոսը և այլն:

ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԾ ՎԵՐԵԼՔ

Սրանից դեռ 12 տարի առաջ Հռովային կոմունաների և գյուղատնտեսական արտելների առաջին համագումարում լենինն ասել ե'

«Միայն այն դեպքում, յերե մեզ հաջողվի գործականում ցույց տալ գյուղացիությանը հողի հասալական, կողիկովի, ընկերական, արտելային մշակման առավելությունները, յերե միայն մեզ հաջողվի ոգենել գյուղացուն ընկերական, արտելային տնտեսության միջոցով, այն ժամանեակ միայն բանվար դասակարգը, իր ձեռքում պահենու պետական իշխանությունը, խփապիտ կապացուցի գյուղացուն իր իրավացի լինելը, խկապես իր կողմը կզրավի հաստատապես և իրապես գյուղացիական բազմամիլիոն մասսան»:

Կուսակցությունը կենսագործելով լենինի այս ցուցմունքը, կարողացավ գյուղացիության չքավոր միջակ մասնաներին համոզել կոլտնտեսությունների առավելությունների մեջ, ընդունել նրանց կոլեկտիվներում: Ցեղե 1928 թվին Խորհրդային Միության մեջ կոլեկտիվացված եր միայն 400 հազար տնտեսություն, 1929 թվին մի միլիոն, ապա 16-րդ կուսահամագումարում (1930 թ. Հռովիս) կոլեկտիվացման եր յենթարկված 6 միլիոն, Խորհուրդների 6-րդ համագումարին 10 միլիոն, խսկ այժմ՝ աշխանացանի սկզբին ոՄՀՄ կոլտնտեսություններում հաշվում ե 14 միլիոնից ավել տնտեսություններ կամ մոտ միտեթյան գյու-

ղական տնտեսությունների ավելի քան 60 տոկոսը:

Ենորհիվ սոցմբցման և հարվածայնության կոլեկտիվացման տեմպերի մեջ մենք չտեսնված նվաճումներ ձեռք բերինք: Դեռ 16-րդ համագումարին Ստալինն առ այլ ե՝ «կոլտնտշինարարության 5-ամյա պլանը յերկու տարվա մեջ մենք արդեն գերակատարել ենք մեկ ու կեն անգամից ավելի»:

Դեկտեմբերյան ոլլենումի (1930 թ.) առաջադրանքը՝ 1931 թվին կոլեկտիվացման յենթարկելու հԱՀՄ գյուղական բոլոր տնտեսությունների վոչ պակաս քան կեսը, նույնպես գերակատարված ե:

Յեւ այդ բոլորը չնորդիվ կուսակցության գլխավոր գծի ճիշտ կենսագործման: Սական կոլեկտիվացման հետ միասին գյուղն են մտնում աշխատանքի սոցիալիստական ձեկբերը, ինչպես Ստալինն է ասում (16-րդ համագումար), «սոցմբցությունը սկսում է ծավալին գյուղում, ընդգրկելով արդեն մեր խորիրդային ու կուսակտիվ տնտեսությունները»:

ԾԱՎԱԼՎՈՒՄ Ե ՍՈՑՄԲՑՈՒՄԸ ԿՈՂՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հայաստանում նույնպես վերջին տարում բավական այն ծավալ ե սատացել սոցմբցումը: Մենք սոցմբցությունն ու հարվածայնությունը զեկավարելու մեջ փորձ ձեռք բերեցինք թե անցյալ տարի աշնանը և թե մանագանդ, այս տարի գտնանը:

Հանկարկես այս տարվա գարնանացանը մեզ հարուստ փորձ տվեց, այսպես որինակ՝ Հուրդուղուլու ըրջանը, ծավալելով սոցմբցումն ու հարվածայնությունը, բայց չեվիյան 2-րդ գարնանացանի ընթացքում չկորցրեց ուռաջնությունը կոլեկտիվացման առաջնորդում, կա-

տարելով կուսակցության առաջադրանքը, կոլեկտիվացման յենթարկեց շրջանի տնտեսությունների 58 ուսուկուր՝ հանդիպական պլանից ել ավելի:

Սոցմբցումն ու հարվածայնությունը բամբակացան շրջաններում մեզ հասցրեց վճռական հաղթանակի, գերակատարվեց 25 հազար հեկտար բամբակ ցանքի պլանը, ցանքեց 26 հազար՝ հակառակ դասակարգացմին թշնամու կատարվի դժմադրության:

Սոցմբցումն ու հարվածայնությունը ծավալելով Գորիսի, Սիսիանի, Ղափանի շրջանները, չնայած յերկրաշրթից առաջացած դժմադրություններին, գերակատարեցին բայլշելիկյան 2-րդ գարնանացանի պլանները:

Սոցմբցումն այս տարի ավելի լայն ծավալվեց կուտանտեսությունների միջև և նրանց ներսը, քան յերբեմից է: Կոտայքի Վողջաբերդ գյուղի կոլեկտիվը մըրցում և Աղվալարի հետ, Ղուրկուլուլու Խղդալու գյուղի կոլեկտիվը, վոր իրեն հարվածային և հայտարարել Արմտուռ և Զանֆիդա գյուղերի կոլեկտիվների հետ, Վաղպատի Հաջիղարա կոլխոզը Ֆրանգանոցի կոլխոզի հետ և այլն, բայց վոր կարեգորն և, չնորհիվ մըրցման և հարվածայնության ծավալման այդ կոլեկտիվները հսկայական նվաճումներ են ձեռք բերել:

Բացի ընդհանուր մըրցումից կոլեկտիվները մըրցման եին դուրս գալիս այս և այն կոնկրետ կամպանիայի համար. որինակ՝ Շամշադինի Պոալաքար գյուղի կոլտնտեսությունը Դրդի գյուղի կոլեկտիվի մըրցահրապերն ընդունելով, ցանել և մի հեկտար պաշտպանության Փոնդի ողաբերն և մըրցման և հրավերել Հայում, Վելի, Զինջին, Տերդ, Մել քար, Աջաջուր գյուղերի կոլեկտիվներնեւ:

ՄՐՑՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՍԸ

Մրցումը ծավալվում է և կոլեկտիվների ներսը, Սարդարաբաղի Հենինյան Գիգանտ» կոլտնտեսության 8-րդ բրիգադան, հարվածային թղթակից Ռ. Ասատրյանի գլխավորությամբ մրցության և հրավիրել 7-րդ և 9-րդ բրիգադներին: Այդ բրիգադը գարնանացանն սկսեց ապրիլի 3-ին, 24 հեկտար գաշտը պարարտացրեց 12 բանվորով, կրկնավարն ավարտեց մեկ ու կես որում, գիշերը տրակտորի առաջ լույս պահելով ապրիլի 10-ին ավարտեց փողիսելը: Մարդոցն սկսեցին ապրիլի 11-ին և ավարտեցին 18-ին, դործադրելով հարյուր բանվոր մարդոցներին 28 հեկտար, ցանքն սկսեցին ապրիլի 20-ին. այսպիսով գարնանացանի վողջ աշխատանքներն այդ բրիգադն ավարտեց 20-22 որում:

Սոցմբցումն ընդգրկում է և կանանց: Գյուղագլուխի Նոր կյանք կոլտնտեսության կանանց հարվածային բրիգադը՝ 35 հոգուց բաղկացած, վոչ մի բանով հետ չի մնում տղամարդկանց բրիգադից: Կանայք մասնակցել են այդին և առելու աշխատանքներն, վոր առաջ միայն տղամարդիկ եյին կատարում: Բրիգադն արժանացել է կարմիր տախտակի:

Լայն ծավալ և ստացել և անհատական մըրցումն ու հարվածայնությունը: Ուսուուր գյուղի կոլեկտիվի մաճկալներ՝ Մացակ Անդրեասյանը, Սուրեն Գաբրիելյանը, Տիգրան Դանիլյանն ու Մարգիս Դովլաթյանն իւրենց հայտարարել են հարվածային: Արտադրական պլանով նախատեսված վարի նորման նրանք բոլորը գերակատարել են:

Թայթան գյուղի կոլխոզի անդամ հարվածային Սողոմոնի Խաչատրյանը չի թողել, վոր կոլեկտիվի Փուրդու

Նը պարագ կանգնի, ամսական 300-350 ռուբլու դրամ
ողուած է հասցրել կոլեկտիվին՝ ֆուրդուները բանեց-
նելով։

Մտեիանավանի «Շահումյան» կոլեկտիվում հար-
զածայինների շարքերում են նույնիսկ ծերերը, 60 տա-
րեկան Մարտիրոս Մանուչարյանը (Ճիազահ) և նույն-
իսկ 83 տարեկան Գարո Զուրաբյանը։

Ռեվալվի կոլտնտեսության 21 հ. ծխախոտի մշակ-
ման գործում աչքի յե ընկնում բրիդաղալար կոմսո-
մուլիսուն Գուրգեն Դրիգուրյանը, վորի զեկալարությամբ
կատարվում ե և խնամվում ցանքը, նա աշխատանքից
վոչ մի որ չի բացակայել։

Աշտարակի Ղարաջորան գյուղի՝ Մուավյանի ան-
վան կոլլուգում զարնանացանի և խոտհունձի ժամանակ
աչքի ընկալ Զոհրաբ Գեվորգյանը։

Կան միության, հարվածայնության հաղարավոր
ու բազմազան որինակներ, վորոնք մեկ-մեկ թվել ան-
հար ե։ Պարզ ե, վոր սոցմբցման ու հարվածայնու-
թյան չնորհել մենք անթիվ նվաճումներ ենք արել։

Սակայն սոցմբցումը մեզ մոտ Հայաստանում և
առանձնապես կոլտնտեսություններում ունի առանձ-
նահատություններ և մի շաբք բացեր, վորոնց գեմ
սիլտի պայքարել առաջիկայում։

ԳՈՐԾԱԲՔԸ, ՎՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ

Սոցմբցումը ճիշտ կազմակերպելու համար ամե-
նակարեվոր նախապայման է գործարքի կիրառումը,
դեռ ավելին, առանց գործարքի և նիշտ հաշվառքի չի
կարող սոցմբցումն ու հարվածայնությունը լայն ծա-
վալ ստանալ։

Ենթե տամաշ շատ կոլտնտեսություններում, ուր

դեռ գործարք չեր մացկան, սոցմբցումն ա. հարվա-
ծայնությունը գոյություն ունեցին, ապա այդ կոլտնտե-
սություններից շատերում սոցմբցությունը աղճաւավում
եր, հարվածայինների շարքերում տեղ եյին գտնում և
կեղծ հարվածայինները, քանի վոր դործարք, արտադ-
րանքի ճիշտ հաշվառում գոյություն չուներ և չեր
սոուսպիսում մրցման ընթացքը, չեր պարզվում յուրա-
քանչյուր հարվածայինի դեմքը։ Այդպիսի կոլեկտիվ-
ներում մի քանի հարվածայինների հետ միասին կարե-
լի յեր հանդիպել և լողիրերի, կեղծ հարվածայինների,
շատ խոսող, բայց զործ չսուող ձրիակերների։ Զիար
ընդհանուր շահագրգուվածություն, չկար իսկական
մրցում, սոցմբցումը վոչ միայն աղճաւավում եր, այլ և
կորցնում եր իր արժեքը, մանավանդ յիրբ աջ պրակտի-
կայի հետեւկանքով անցյալ տարի բերքը կոլեկտիվում
բաժանվում եր ըստ չնչի և վոչ ըստ աշխատանքի։ Սոց-
մբցումը կորցնում եր իր, վորպես արտադրության
բարձրացնող Հզոր Ծակի դերը, յերբ բուն եր դնում
«ձախ» ըստ եյության հետադիմական «Հայաստարեց-
ման» սկզբունքը, վոր ժխտում և գործարքը, վարձա-
տումը ըստ աշխատանքի քանակի ու վորակի։

Ահա այս խնդիրների առթիվ իր վճռական իրուքն
առեց Խորհուրդների համամելութենական 6-րդ համա-
դումարը։

«Աշխատանքի կազմակերպման միակ նիշտ միջոցը
կոլլուգներում հանդիսանում է գործարքային սիստե-
մը» (Յակովել)։

«Ավ շատ և լավ կաշխատի, նա շատ կատանա, ով
չի աշխատի, նա վաչիմչ ել չի ստանա»։

«Գործարքը պիտի կիրառել կոլտնտեսության բո-
լոր աշխատանքներում»։

Այսպիս և վարուշել Յ-րդ Համարդումարը:

Բայլելիկյան յերկրորդ գարնանացանի հարուստ փորձը ցուցց տվեց, վոր իսկապես գործարքի և ճիշտ հաշվառքի միջոցով հնարավոր և բարձրացնել արտադրողականությունը մի քանի անգամ, վոր հնարավոր և բողոքականությունը մի քանի անգամ, վոր հնարավոր և այդ միջոցներով հայտնաբերել կեզծ հարվածայիններին, հնարավոր և սոցմբացման ու հարվածայնության մեջ ներդրավել հազարավոր նոր կոլտնտեսականների և

Ն. Աղբաշի կուեկտիվում գործարքային աշխատանքը վերացրությունն ու ծուլությունը, վորովիկետ բոլորն ել պիտեն, վոր յեթե շաշխատեն, վոչինչ չեն:

Փարքի գյուղում գործարքը վերջ տվեց լողիությանն ու «զլուկա պահելուն» աշխատողներին տրված և իրենց նորման և ամեն մեկը ջանք և գործ զնում ամելի աշխատել, վորակեսդի ամելի աշխար ունենա ու շատ յեկամուս ստանա: Մասատունիի փոսերը փորելու նորմա յի գրված մի հոգուն 20 փոս, սակայն 5 հոգուց բաղկացած մի բրիգադը մեկ որում փորեց 200 փոս (ամեն մեկին որեկան 40 փոս):

Ֆրանգանոց գյուղի կուեկտիվի 35 հեկտար այդին բացելու համար պիտի գործադրվեր 300 բանոր, սակայն, չորսիվ գործարքի և սոցմբացման 24 հոգուց բաղկացած բրիգադը այդին բացեց 11 որում՝ գործադրելով 191 բանոր, տապիսով խնայվեց 109 բանոր:

ԳՈՐԾԱՐՔՆ ՈՒ ՍՈՑՄԲԱՑՄԸ ՊԻՏԻ
ՀԱՍՑՆԵԼ ՈՂԱԿԻՆ, ԿՈԼՏԵՏԵՍԱԿԱՆԻՆ

Ավելի մեծ արդյունքների յենք հասնում, յերբ գործարքը հասցնում ենք վոչ թե մինչև բրիգադ, այլև մինչև ողակ և անհատ կոլտնտեսականի:

Այսպես, որինակ՝ վաղպատի, Ն. Խաթունարին գյուղի Ստալինի անվան կուեկտիվը նախապատրաստությունի վործարքի ողակային անհատական սիստեմին: Վել և գործարքի ողակային անհատական սիստեմին: Ողակային-անհատական գործարքը հենց առաջին որականից համարվել է արդյունքներ առեց: Մկրտիչ Մուրադյանի բրիգադի անդամներն առաջ քաղհանում են բիջին հաշվով 2 և կես լիոր բամբակ, մինչդեռ ողակային ձեւը կիրառելուց հետո նույն բրիգադի անդամները մինչև ճաշ քաղհանում են 3½—4 լիոր: Արագույս Ղարիբյանի բրիգադը նորմաներն ու նարյառը կատարեց միայն ողակային-անհատական գործարք կիրառելուց հետո:

Անդրեաս Հովհաննիսյանի բրիգադը, 8 հոգով, մի հեկտարի վրա 20 սայլ մոխիր պիտի ցաներ, բայց անհատական գործարքի չնորհել ցանել և 40 սայլ 2 հեկտարի վրա: Ֆրանգանոցի կանանց բրիգադը, վոր մեկ որում պիտի քաղհաներ մի հեկտարը՝ 10 հոգով, կին բրիգադավար Քիշմիշի ղեկավարությամբ, քաղհանեց մեկ ու կես հեկտար և բուքսիրի վերցրեց մյուս բրիգադներին:

Սակայն միայն գործարքը չե, վոր անհատ—կուտանտեսականին հասցնելիս բարձրացնում և արտադրության պահպանությունը. գործարքի հետ միասին մինչև անհականությունը. գործարքի հետ միասին մինչև անհականությունը. գործարքի հետ միասին մինչև անհականությունը. սոցմբացման մինչև հիմա մեր ունեցած բացերից ամենագլաւուրը հենց այն և, վոր մրցումը կոլտնտեսականների միջև ավելի վատ և կազմակերպված քանի բրիգադների, կոլտնտեսությունների մրցումը: Շատ անդամ հենց այդ պատճառով սոցմբացման վերածում և վոր մինչև անհատական սիստեմի օպերատության, պայման են կապում, ճառեր ասում ու վերջ:

Անհատական գործարքի կիրառմամբ հնարավոր ե
միանքամայն հեշտությամբ սլարդել, թե ո՞վ և իսկա-
կան հարվածայինը, իսկ սոցմբցումը կազմակերպելով
կոլտնտեսականների մեջ, անհատական մրցման պայմ-
անագրեր կնքելով, պարբերաբար ստուգելով, պար-
զելվատրելով և ու սպիտակ տախտակներին գրելով
հնարավոր և ավելի մեծ հաղթանակների հասցնել: Յեկ
իսկապես Սարդարաբարքի և Նորդուղուցու մի շարք
առաջակալով կոլտնտեսությունների փորձը հաստա-
տում ե այդ. գործարքն ու սոցմբցումը փոքր ողակնե-
րին ու կոլտնտեսականներին հասցնելով, ոեկորդային
արտադրողականություն և ստացվել (որ. 12—13 լիար
րամբակ քաղհանդել և մի որում):

Սակայն այստեղ առաջ ե դալիս դժվարություն,
վորի դեմ կանգ են առնում շատ կոլտնտեսություններ
կամ կաղրերի պակասության դեմքում կամ ել, վոր
բացառություն չե, ոպորտունիտական վերաբերմունքի
պատճառով —դա հաշվառման գործն ե:

ՃԻՇՏ ՀԱՇՎԱՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոցմբցումն ու հարվածայնությունը կազմակերպե-
լու մի տարվա փորձը ցույց տվեց, վոր ամենամեծ
դժվարությունը, վորին հանդիպում են տեղական կազ-
մակերպություններն այդ գործը դիմավորելու ժամա-
նակ —դա հաշվառման, սոցմբցման ընթացքն ստուգե-
լու աշխատանքն ե:

Հաճախ գործը լսվ սկսելուց, սոցմբցման պայմա-
նագրեր կապելուց, այն մասսայականացնելուց, հար-
վածայնությունը ծավալելուց հետո, մոռանում են հե-
տագայում ընթացք տակ ու դեկախարել սոցմբցումը,

հաշվառում, ստուգումներ չկատարելու և ըստ դրա
պարզեվարելություն չանցկացնելու հետեւանքով:

Ե. Խաթունարխ պյուղում սոցմբցումն իսկապես
վոր կազմակերպված եր, բայց հետագայում վոչ ճիշտ
հաշվառման, ստուգումներ չինելու պատճառով պարզ
վարչությանն ու կուսաչիշին, թե ովքեր են իսկա-
կան հարվածայինները, վոչ մի ճիշտ տվյալ չկար,
միայն հարվածային աշխատանքով մի քանիսը աշքի
ելին ընկնում, իսկ մյուսները վոչ: Պարզեվատրման
500 ո. գումարը մինչեւ բերքահավաք ել դեռ մնում եր
անողագործելի:

Ավելի վատ եր դրությունը «Անաստված» կոլուն-
տեսության մեջ: Այս կողեկտիվը համարյա ամենամեծն
է ամբողջ Հայաստանում, ունի հազարից ավելի աշխա-
տունակ անդամներ, սակայն բամբակի թե ցանքի և թե
մանավանդ քաղցանի աշխատանքները խայտառակ կեր-
պով կազմում ելին: Դրա պատճառներից գլխավորն այն
եր, վոր ղեկավարության թուլության հետեւանքով
շատ վատ եր դրված հաշվառքի գործը. նախ գործար-
քը յեկար ժամանակ չեր կիրառվում ու լուրջ դիմագո-
րության հանդիպեց նույնիսկ կուսակցականների կող-
մից, ապա և հակողության բացակայության պատճա-
ռով դաշտային աշխատանքի դուրս եր գալիս աշխա-
տանքի ընդունակների թվի կեսից ել պահանջ: Իսկ
աշխատանքների մեջ ել սոցմբցումը արմատներ չեր գը-
ցում, վորովհետեւ հաշվառքի բացակայության պատ-
ճառով պարզեվատրմում ելին պատահական մարդիկ,
վորոնցից կային այնպիսիները, վոր հարվածային կոշ-
վելու դեռ արժանի յել չելին, բացի այդ պարզեվա-
տրման Փոնտն ել (մոտ 1500 ո.) մնացել եր մինչեւ
վերջերս անողագործելի: Նույն թերությունն ունեն

բնդմաթիվ այլ կօլտնտեսություններ նույնագեռ և գեր կան այնպիսիներն ել, մանավանդ նոր կազմակերպությունները, վոր ամենելին պարզեվատրման փոնդեր չեն տունձնացրել:

Այսպիսով գործարքի կիրառումը, ճիշտ հաշվառումը և պարզեվատրումն, սոցմբցումն սկսելուց հետո, այն դիմավորելու կարելոր պայմաններ են հանդիսանում. բացի այդ սոցմբցումը հաջող դիմավորելու և աշխատանքի մշտական մեթոդ դարձնելու համար պետք ե վերջ տալ և մի այլ բացի, սոցմբցումը ժամանակավոր կամպանիա համարելուն: և վորպես այլպիսին այն դեկավարելու պրակտիկային: Գարնանը մրցում կաղմակերպելուց, գարնանացանը հաջող անցկացնելուց հետո Վաղպատի շրջանի մի շարք կոլտնտեսություններ, Սամազար, Ն. Խաթունարիս, «Անաստված», Փարաքար և այլն քաղհանի ու մշակման ընթացքում թուլացրին տեմպերը, մոռացան սոցմբցման գործը՝ չստուգեցին հին պայմանագրերը, նորերը չկնքեցին: Ահա ինչու այդ կոլտնողներից շատերում ճեղքվածքներ առաջացան:

Ահա այս թերությունները վերացնելու համար կուս. կոմյերիտ և մյուս գյուղական կազմակերպությունները պետք է լարեն իրենց ուժերը և կաղմակերպեն, դիմավորեն սոցմբցումը:

ՈՒՂՂԵԼ ՍԽԱԼ ՆԵՐԸ.

Ի՞նչ պիտի անել աշնանացանի ընթացքում:

Աժենից առաջ անիրաժեշտ է խսպված իրի պայմանագրերի առուգումներ անց կացնել: Ստուգումները կազմակերպելու վերջին ժամկետ ունետի ընդունել բերքի և կոլեկտիվացման որը: Մինչ այդ անհարաժեշտ և հատուկ կամիսիաներ, պատրամավորություններ ընտ-

րել սոցմբցման 4ին պայմանագրերը (գարմանացանի կամ մշտակման կամպանիայի ու բերքահավաքի ժամանակապահած) ստուգելու համար: Պատրամավորությունները կամ բրիգադները պիտի անցնեն գյուղից-դյուզ, կոլեկտիվից մյուս կոլեկտիվը, բրիգադները, ուղակները և ստանձնապես մբցող կոլտնտեսականների մոտ և տեղին ու տեղը ստուգեն պայմանագրերի կետերի կատարումը քանակով թե վորակով: Կոմիսիաները պիտի լիազորություն ունենան վորոշելու, թե ով և հաղթանակել և կատարել պարզեատրություն:

Պարզեատրություններ կատարելիս չպիտի ժամանակություն անել և ստեղծված Փոնդերն (ըստ կարիքի) պիտի գործադրել, քանի վոր պարզեատրման Փոնդերի ճիշտ գործադրության դեպքում կոլտնտեսությունները հետագայում մեծ ոգութ կատարելու համար անել և կատարել պարզեատրություն:

Այն կոլեկտիվներում, ուր փոնդ դեռ մինչև հիմա չկա, պիտի ստեղծել: Բերքի բաշխման հրահանգի համաձայն կոլտնտեսության յեկամուտներից 1,5 տոկոս հատկացվում ե պարզեատրման Փոնդին, վորպես որենք այդ ուժմարը պետք է անպայման և առաջին հերթին առանձնացնել բերքի բաշխման ժամանակ, իսկ ուր բաշխումն ուշանում է, այդ փոնդի հաշվին հատկացումներ անել պարզեատրությունների համար:

Պարզեատրությունների համար գումարներ պիտի սուեզել և ըջկոլոնտմիությունների, կոլտնտեսությունների և հողորդանների գծով այդ մասին նախորոշ պիտի մտածել մինչև բերքի տոնը, մինչև ցուցահանդեսները:

Ցուցահանդեսներին մասնակցելու համար կոլտնտեսություններում նախորոշ պիտի պատրամավել և սոցմբցման ու հարվածայնության արդյունքներն որ

առաջ պարզել: Այս տարի բներքի տոնին բներքից բացի պիտի ցուցահանել և աշխատանքը, աչխատանքի արտադրողականությունն, այդ ասպարիզում՝ կոլտնտեսությունների ունեցած նվաճումները:

ԱՇԽԱՏԱՑԱՆԻ ՊԼԱՆԸ.

Այս տարի արշանացանի պլանով՝ Հայաստանում նախատեսնվում է ավելացնել ցանքերի տարածությունը՝ և հաջնել այն 115 հազար հեկտարի, անցյալ տարվա 94 հազար հեկտարի դիմաց: Աշնան վար պիտի կատարվի 160 հազար հեկտար, վարից բամբակի համար՝ 33 հազար հեկտար, տեխնիկական այլ կուլտուրաների համար՝ 11,3 հազար հեկտար և կերի մշակույթների համար 33 հազար հեկտար: Այս տարի սերմը պիտի զույթ ամբողջովին, տեղական տերմացվի՝ փոխարեն 48 հազար ցենտներ «ուկրաինկա» և այլ տեսակավոր սերմացու պիտի ցանքի 34 հազար հեկտարի վրա: աշնանը պիտի զույթ և գարնանացանի սերմացուն: Պիտի ախտահանվի հիվանդություններով վարակված բոլոր տարածությունների ու դյուզերի սերմացուն և ընդհանրապես տեսակավոր և ներմուծվող սերմացվի՝ վոչ պահան քան 100 տոկոսը: Բամբակի հողերից 15 հազար հեկտարի վրա արաթ պիտի արվի, պետք և ընդարձակվի բազմամյա և աշխանացան խոտարույսերի ցանքի տարածությունը, պիտք և արոտների բարեկալում կոտարվի (քարերը մաքրելով, վարելով և այլն):

Այդ պլանում մեծ բաժին և ընկնաւմ կոլտնտեսությունների վրա: կոլտնտեսությունների աշխանացանի տարածությունը պիտի հասցվի 50 հազար հեկտարի տեսակավոր սերմացվով ցանքը 14240 հեկտարի, 37 հազար հեկտարի շարքացանք պիտի արվի և այլն:

Միաժամանակ աշխանացանին պահանջվում է բարձրացնել արտղրողականությունը, մեքենաները լրիվ ծանրաբեռնել, տրակտորները, տրիներները և շարքացանները պիտք ե աշխատեցնել 3 հերթի որևէ կան վոչ պակաս քան 20 ժամ, յուրաքանչյուր տրինը սեղոնի ընթացքում պիտի զտի վոչ պակաս քան 600 ցենտներ սերմացու, յուրաքանչյուր 10 կամ 11 շաբացան մեքենա ձիով-կամ յեգներով աշխատելու դեպքում որեկան պիտք ե 60 հեկտարը ցանք անի, իսկ տրակտորով աշխատելու դեպքում 150 հեկտար:

Բացի այդ թե ցանքը, թե գոտումն ախտահանումը պիտք և կատարել վորոշված ժամկետներին կամ ավելի շուտ:

ՆՈՐ ԿՈՂՏՆՏՎԵՐԵԼՔԻ ՆՇԱՆԱԲԱՆԻ ՏԱԿ

Բայց, վոր ամենակարեռն է, աշխանացանի կամպանիան պիտի անցկացվի՝ սոցիալիստական սեկտորի շղորացման, մասնավորապես կոլտնտեսությունների աճման նշանաբանի տակ:

Հայ. Կ (բ) Կ. Կ. Կոմի և Անդրյանիրկոմի գիրեկ-աթիվների համաձայն՝ կոլեկտիվացումը բամբակացան շրջաններում պիտի ավարտվի հիմնականում ամենատուը 1932 թվին, իսկ մյուս շրջաններում՝ 32-33 թվին: Այդ նշանակում է, վոր, վորակեսդի այդ պլանը կատարվի, այս աշխան ուժեղ վերելք պիտի ստեղծվի՝ կոլտնտեսություններում:

Մինչդեռ մեղ մոտ, Հայաստանում կոլեկտիվացման շատ ցածր 27,9 տոկոսն ունենք. մենք հետ ենք մնում Ադրբեջանից, Վրաստանից և Խորհրդային Միության համարյա բոլոր, նոր պատմություններ, ծայրամասային շրջաններից: Նորմանությունների աղպատի շրջա-

նը կոլեկտիվացված եւ միայն 35 տոկոսով, Վեդին 21 տոկոսով, իսկ անասնապահական շրջանները եւ ավելի շաճր տոկոսով. որինակ Թալինը հաղիվ 10.7 տոկոսով, Աղբարան 20.3 տոկոսով, Ախտան 17.4 տոկոսով, Մարտունին 16.5 տոկոսով, Դարալագյաղը 14.5 տոկոսով և այլն :

Հայ. Կ. (թ) Կ. Կենտկոմի հուլիսյան պլենումն արագնագրեց, վորայդ հետևանք և 30 թվի գարնան «Ճախ» սխալները աջ պրակտիկայով ուղղելու:

Աշնանացանի նախորյակին հնոց մի շարք շրջաններ հաղթահարելով աջ ոպորտունիզմը սոցմքցման ու հարվածայնության ծավալմամբ առողջ կոլտնտվերելք ստեղծելու փայլուն որինակ տվին. Ղամարլուն ողոստոս ամսվա ընթացքում ընկունեց մոտ 2000 նոր տնտեսություններ, Ղուրդուղուլին կոլեկտիվացումը հասցրեց 75 տոկոսի, Գորիսը, ուր գեռ մուտք չեն դորձել բարդ մեքենաները և ուր ոպորտունիաները պնդում ենին, թե կոլեկտիվացումը հաջողություն չի ունենա, ամառվացելի, աշնանացանի նախապատրաստման ընթացքում ուժեղ կերպով աճումը շարունակվում եր:

Այս փաստերը խոսում են այն մասին, վոր կոլտընտեսությունների կարծ ժամանակվա գոյության ընթացքում, հաջող աշխատանքի չնորհիվ ձեռք բերած նվաճումները խիստ համոզեցուցիչ են, վոր չքավոր ու միջակ գոյուղացիությունը ե՛լ ավելի խորն և համոզվում նրա մեջ, վոր ինքը վաղ թե ուշ կոլտնտեսության մեջ պիտի մտի և ցանկանում է այդ կատարել: Անհրաժեշտ է միայն հաղթահարել ոպորտունիզմը և գլխավորել կոլտնտվերելը:

ԵԼ ԱՎԵԼԻ ԾԱՎԱԼԵԼ ՍՈՑՄՐՑՈՒՄՆ ՈՒ ՀԱԲԱԾԱՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վճռուկան պայմբար տանելով դասակարգային թըշնամու դեմ կոլեկտիվացման տեմպերի արագացման համար պետք եւ ծավալել ոսցմքցումն ու հարվածայնությունը:

Ուժեղ, բայց առողջ կոլտնտվերելք ստեղծելու համար պետք եւ կազմակերպված աշխատանք ծավալել. պետք եւ կարողանալ ընտրություն կատարել կոլեկտիվացման նպատառը միջոցառումների մեջ, նպատակ ունենալով չխախտել կամավորության լենինյան սկզբունքը, սոցմքցումը չվերածել թվերի ու տոկոսների հետեւյց վաղելու խաղի:

Պետք եւ ոգտվել անցյալ տարվա փորձից, թույլ չըտալով կրկնել անցյալ տարվա սխալները:

Այդ նպատակով ել սոցմքցումը պիտի ծավալվի վոչ միայն տոկոսների համար, այլ առողջ վերելքի համար. պետք եւ մրցել կոլտնտեսության նվաճումները բավ ցուցահանելու և դրա հիման վրա աճում ստեղծելու համար, պետք եւ մրցել բերքի ճիշտ բաշխում, լրիվ գործարք, կանոնավոր հաշվառում, ծավալուն կոլտնտեսականների համար, պետք եւ կազմակերպել ինիցիատիվ խմբակներ, ներդրավող բրիգադներ, «կարմիր խնամախոսներ» ուղարկել անհատ տնտեսությունների մոտ, ծավալել լուրջ պայքար կուլակի դեմ ամեն մի կոլտնտեսականի համար, մասսայականացնել արտելի կանոնադրությունը, գործարքի եյությունը, բերքի բաշխման սկզբունքը, կուռակցության վրա ուղղումները և դրա հիման վրա առաջացած աճման արդյունքներով մրցել իրար հետ:

Սակայն բացի կոլեկտիվացումից, աշնանացանքը ընթացքում պլանն իրագործելու համար եւ անհրժեշտ է ծավալել սոցմբցումն ու հարվածայնությունը և այդ յերկու խնդիրները պիտի սերտորեն շաղկապել իրար:

Աշնանացանի պլանն իրագործելու համար անհրաժեշտ է պլանը հասցնել մինչև կոլտնտեսություն, մինչև ամեն մի բրիգադ և ուղակամենն մի կոլտնտեսության մեջ կոլտնտեսականները պետք է ծանոթ լինեն իրենց պլանն, իմանան յերբ և ինչ պիտի կատարել:

Պետք է պատրաստ ու նորոգված լինեն բոլոր մեքենաները, ռայլերը, դրոքեները, լծասարքերը և այլն:

Պետք է ձեռք բերված լինի սերմացու. կոլեկտիվը, յեթե տեսակավոր սերմ չունի, իր սերմացուն պիտի փոխի ու ձեռք բերի տեսակավոր սերմացու. սերմացուն պիտի ժամանակին զույի, ախտահանդի. սերմացվի համար պահեստները պիտի պատրաստ լինեն, վարը պիտի ժամանակին կատարվի, աշխատանքն այնպես պիտի կազմակերպված լինի, վար զարծարքի ու հաշվարուման ճիշտ կիրառման հիման վրա աշնանացանի պլանը կատարվի ու գերակատարվի քիչ ու մեծ ու ու քիչ ծախսով, մեքենաները լրիվ ծանրաբեռնված ություն պիտի ունենան, վառելիքն ու կերը պիտի ծախսվեն խնայողաբար և այլն:

Աւա այս խնդիրները կատարելու համար նույնական պիտի լայնորեն ծավալվի սոցմբցումն ու հարվածայնությունը:

Ի՞նչ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋՁԼ ՊԻՏԻ ՄՐՑՅԵԼ

Աշնան գյուղատնտեսական կամպանիան միայն աշնանացանով չի սահմանափակվում. աշնանացանը պիտի լուրջ գժվար է հենց նրանով, վոր իրար հետ զուգընթացաբար պիտի առաջ տարվեն և բերքահավաքը

և թերթի պահպանումը, բաշխումը, սերմի զարումն ու ախտահանումը, վարը, ցանքը, տրաթը, մթերումները, շինարարությունը և այլն:

Այդ բոլորը հաշվի առնելով աշնան գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում սոցմբցումը պիտի ծավալվի կունկերու կերպով հետևյալ հարցերի չուրջը.

Սկսել և ավարտել ծխախոտի, բամբակի, բանջարաբույսերի ու աշնան մրգերի բերքահավաքը, թույլ չոտ, վոր վոչ մի փաթթի բամբակ, վոչ մի ծխախոտի տերեւ, վոչ մի կելո միրդ փշանա կամ դաշտում մնա:

Բամբակն անմիջապես տեղափոխել և հասցնել մըթերակայան, չթողնելով դաշտում փոշու, արեի ու անձրեկի տակ, չանաքը կը կնել այնքան, մինչի վոր վոչ մի փաթթի չմնա դաշտում. գերակատարել մթերման պլանը:

Արագ տվարտել ծխախոտի չորանոցների կառուցումը, չհասցնելու գեղցում ճարել ժամանակավոր շնորհեր, աշխատել բառ հնարավորին անսպայման արեւի տակ չորացնել տերևները, լավ տմկացնել ու հակագործել և գերակատարել կոնտրակտացիոնի պլանը:

Արմատապտուղների պահպանման համար օպահեատներ շինել կամ հողի մէջ խնամքով պահել, խաղողը չփչացնել և շտապ հանձնել մթերող որդաններին:

Հացահատիկները հնձելուց հետո չթողնել կալերում կալսել որ ու գիշեր, զտել ու ախտահանել ամբողջ սերմացում՝ աշնան թե զարնան համար, նոր միայն հրբեր ածել, չթողնել վոչ մի տրիեր անդարձ մնա, մի կուկետիվում զտումը վերջացնելուց հետո, չարունակել անհատ տնտեսությունների համար կամ ուղարկել կուկետիվին:

Յարուճակել սիլուացման աշխատանքները, թգտագործելով կեր պատրաստելու բոլոր հնարավորություններ՝ —մոլախոտերը, բանջարանոցների թերուցքը, վըչչած պտուղները, արմատապուղների կտորատները, անտառապտուղները, ավելորդ գարմանը և այլն :

Բերքը բաժանել էիշտ՝ ըստ աշխատանքի քանակի ու վորակի:

Կատարել և դերակատարել մթերումների ու դրամական միջոցների մորինիզայի պլանները:

Ժամանակին, Հարվածային կերպով և լավ վորակով կատարել ու ավարտել վարի պլանը, արաթը կատարել ինչքան կարելի յե չուտ և շատ տարածության վրա: Ցանքը կատարել շատ և ազատ պահել բամբակի ու գարնանացան մյուս տեխնիկական բույսերի հատկացված հողամասները:

Աշնանացանը ու մյուս պլանները քննել ժամանակին ու հասցնել կոլեկտիվի յուրաքանչյուր բրիգադին ու ողակին:

Աշնան գյուղատնտեսական բոլոր աշխատանքներում կատարել դորձարք և կարգավորել հաշմառումը:

Բերքի տոնին ու այնուհետ կազմակերպել ցուցահանդեսներ, վեր հանել կոլտնտեսության բոլոր նվաճումները, ուղղել սիալները, նվաճումների մասին տեղյակ դարձնել վոչ միայն կոլտնտեսականներին, այլև արսգայթան բոլոր անհատ անտեսություններին:

Կազմակերպել ինիցիատիվ խմբակներ, ներդրավող հարվածային բրիգադներ, ուղարկել «Հարմեր խնամախոսներ», զեկուցումներ դնել, բացատրել և մասսայականացնել կուսակցության ու կառավարության բոլոր վորոշումները և ստեղծել ավելի ուժեղ վերելք քան յեզել և գարնանացանի լնթացքում:

Արակացնել անառնակազմի համալրումը, ազդրանքային Փերմաներ ստեղծել, զարկ տալ անաօնապահությունը մանր ճյուղերին (ճաղարաբուծություն, հավարուծություն, խողաբուծություն), արագ ալիքատել գոմերի, փարախների, ախոռների, մարաղների, պանրագործարանների և մյուս կառուցումները:

ՄՐՑՈՒՄ ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս տարի մրցման պայմանագրերի մեջ մեծ տեղ պիտի հատկացնել արտագնացությունը կազմակերպելու գործին:

Գործարքն ու սոցմբյումն ապարդյուն կանցնեն, իեթե կոլտնտեսության մեջ նոր ստեղծված ու գյուղերում միշտ գոյություն ունեցող պետրոգ բանութը չողտապործվի: Մեր յերկիրը զարգանում և վիթխարի տեմպերով, նոր գործարաններ ու նոր խորհուտեսություններ, մեքենատրակտորային կայաններ են ավելանութ ամեն շրաբ, ավելի ճիշտ ամեն որ: Ինդուստրիայի ու գյուղատնտեսության զարգացման այդ արագ տեմպերը պահանջում են բանութ:

«Մենք վերացրիմք անգրությունը»—ասում են լնկ. Ստալինը—ինուևակս մենք վաշնացրիմք այն ուժը, վոր նոշում եր աշխատանքի, զավաշի վրա, մենք տասմյակ հազարավոր տրակտորներ հայրայրեցիմք զյուղին, զախարացինք կուլակին, կազմովիերացիմք կոլտնտեսություններ, զյուղացիներին ենարափուրություն տվեցիմք մարդավայել ապրելու և աշխատելու. զյուղացին այլև զյուղից բաղաք չի փախչում, այլևս բանվարակն ուժի ինքնահոս չկա:

Յեկ իսկապէս կոլտնտեսություն մտնելուց Հետո չքավոր, բատրակ, միջակ դյուզացին տնտեսական սուբ կարիքի մեջ չի և ստիպված չի լինում քաղաք գնալ, ինչպես առաջ: Սակայն գործարքի կիրառման չնորհիվ հատկապես, ինչպես մեջնաների գործադրության, սոցմրցման և այլ պատճառներով կոլտնտեսություններում առաջ են դալիս բանվորական աղատ ձեռներ, վորն արդյունաբերության մեջ աշխատելու ուղարկելու դեպքում կոլտնտեսությունը մեծ յեկամուտներ կունենա:

Միաժամանակ արդյունաբերությունն ել բանում ուրիշ տեղից չի կարող ստանալ, յեթե վոչ կոլտնտեսությունից ընկ. Ստալինն ասում ե.

«Այլիս չի կարելի հույս դնել բանվորական ուժի իբնահոսի վրա, ինտելավեն ինքնահոսի «Քաղաքականությունից» պետք անցնել արդյունաբերության համար բանվորների կազմակերպման հալուքման բաղակականությանը, սակայն դրա համար կա մի ուղի, տնտեսական կրագմանի բարությունների պայմանագրումը կոլտնտեսությունների և կոլտնտեսականների հետ»:

Կատարելու համար մեր կուսակցության առաջնորդի դիրեկտորի և Հնդամյա պլանի իրավունքուն արագացնելու համար ամեն մի կոնկրետ պարագար և արտագնացներ տալու համար պայմանագրեր կնքել վորհեն արդյունաբերական ձեռնարկի հետ: Կոլտնտեսությունների իրար հետ պիտի մրցեն շատ արտագնացներ տալու և արտագնացների նիշու կազմակերպելու հարցի շուրջը:

ՍՏՈՒԳԵԼ ՀԻՆ ՊԱՅՄԱՆԱԴՐԵՐԸ, ԿԱՊԵԼ ՆՈՐԸ

Մինչև բերքի տոնը և հատկապես բերքի տոնին պիտի անցկացնել սոցմրցման պայմանագրերի լայն ստուդատես, պետք է բերքն ստանալուն պես հատկացումները կատարել մրցանակաբաշխության Փոնդին, ստուգել մըրցումը սկսած ստորին ողակներից-անհատական մըրցուամից և պատրաստվել բերքի տոնին ցուցահանդեսներում մըրցության գուրս գալու շըշանիմյուս կոլտնտեսությունների հետ: Ստուգման համար պիտի ընտրել հատուկ կոմիսիաներ, պատղամավորություններ, վորոնք մանրամասն ստուգելով աշխատանքը աեցն ու աեղը, պիտի վաղորված լինեն և պարզեատրություններ-մրցանակարաշխություն կատարելու: Գետք է մըրցման ընթացքի և հարվածայնության տարածման մասին տեղյակ պահել բոլոր կոլտնտեսություններին, սկատի թերթում պիտի լայնորեն պարզաբանել սոցմրցման դրական ու բացասական կողմերը, ունեցած նվաճումները և բացերը:

Սակայն գրա հետ միասին անհարժեշտ և սկսել նոր պայմանագրերի կապելը: Սոցմրցման նոր պայմանագրեր կապելիս ուշադրության կենտրոնում պիտի ունենալ անհատական մըրցումը: Վերջին հաշվով բրիգադի, կոլեկտիվի արտադրողականության բարձրացումը ընդհարնապես, յուրաքանչյուր անհատ կոլտնտեսականի աշխատանքի արտադրողականության բարձրացումից և կախված: և ինչքան շատ կոլտնտեսականներ անհատապես մըրցման մասնակից մինեն, այնքան սոցմրցումն ավելի լավ կազմակերպված կարելի յե համարել, այնքան ավելի նա ծառայած կլինի իր նպատակին:

Անհատական մրցման ժամանակ ի հարկե մրցման
խնդիրներն ավելի սահմանափակ, ավելի կոնկրետ պի-
տի լինեն, ավելի քիչ կետեր պիտի ընդդրկեն:

Անհատական պայմանագրերի կնքմանը պիտի հա-
ջորդի ողակների, բրիգադների, տնտեսության առան-
ձին ճյուղերի հետ մրցման պայմանագրերի կնքումը:

Առանց դրան սոցմրցումը կոլտնտեսության մեջ
տարերային բնույթ կունենա, անհատական մրցման
շաղկապումը խմբակային մրցման հետ աշխատանքի
մեջ կարգապահություն, կազմակերպվածություն
կմտցնի: Բացի այդ, կոլեկտիվ աշխատանքը, կոլեկտիվ
մրցումը յեռանդ կտա մրցման մասնակողներին և մըրց-
ման մեջ կդրավի և անհատական մրցման պայմանագրի
չունեցողներին, հետ մնացողներին:

Մրցումը կոլեկտիվի ներսը կազմակերպելուց հետո
պիտի սկսել սոցմրցման պայմանագրեր կատել կոլեկ-
տիվների միջև, կոլտնտեսության և խորհունտեսության
միջև, կոլտնտեսության և արտադրական ընկերության,
գյուղխորհրդի, գործարանի, կոլյերիտդպրոցի միջև և
այլն:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՊԻՏԻ ԼԻՆԵՆ ԿՈՆԿՐԵՏ

Անշուշտ տնտեսական-քաղաքական սոցմրցման արդ-
դայմանագրերը տարբեր բնույթ պիտի կը են: Անպայ-
ման անհամաժեշտ չի, վոր պայմանագրերն ընդդրկեն բո-
լոր խնդիրները, վորոնց շուրջը կարելի յե մրցել. ընդ-
հակառակը պետք ե վերցնել կոնկրետ խնդիր:

Որինակ, յենթադրենք կոլտնտեսությունը բամբա-
կացան ե, հարեան կոլտնտեսության հետ նա կարող ե
մրցել բամբակի ցանքի, մշակման, բերքի քանակն ու
գորակը բարձրացնելու խնդրի շուրջը, գյուղխորհրդի

հետ կարող ե մրցել հանապարհների շինարարությունը,
միջոցների սոբէլիզացիայի պլանն արագ կատարելու-
շուրջը, արտադրական ընկերության հետ վարկավոր-
ման ու ցանքի, մշակման սպասարկումը, մթերումները
հաջող կատարելու շուրջը, գյուղյերիտի հետ անդրա-
գիտության վերացման, պոլիտեխնիզացիա մտցնելու
շուրջը, խորհանտեսության ու գործարանի հետ արտա-
դնացություն կազմակերպելու, պլաններ կատարելու
շուրջը և այլն:

Պայմանագրերի վերակնքման այս աշխատանքի
համար պիտի հարվածայիններից ընտրել պատգամա-
վորներ, ներկայացուցիչներ կոլեկտիվից-կոլեկտիվ,
խորհունտեսություն, գործարան զնալու, տնտեսության
գրության հետ ծանոթանալու և ըստ դրա պայմա-
ռագրի կետերը մշակելու, ու մասսայական ժողովներով
անցկացնելու համար:

Շատ կարեւոր ե, վոր կոլեկտիվն ունենա մրցումը
կտղմակերպող հարվածայիններ, վորոնք պայմանագրեր
կնքելուց հետո հաշվի առնելին այդ. հատկապես պիտի
հաշվի առնել իրենց հարվածային հայտարարողներին,
ինքնակոնտրակացիայի կազմողներին և այլն:

Պայմանագրեր կնքելիս պիտի հաշվի առնել հարվա-
ծայինների կենսագործվող աշխատանքային նորմանե-
րը, աշխատելով պայմանագրի մեջ վորոշ տոկոսով
բարձրացնել այն, վորպեսզի մրցությունը ձեվական
չլինի. սովորական եներգիա չպահանջի, այլ վորոշ բար-
գածություն առաջ բերի:

Ստուգումների ժամանակ անսպայման պիտի հաշվի
առնել, տեղական առանձնահատկությունները, որինակ
չի կարելի պահանջել, վոր նոր յուրացվող հողամասե-
րից նույնագույն բամբակ սուտցիկի, ինչպան լավ մշակ-

ված, պարաբռացրած հողամասերից. այդպիսի հողամասերում տարբեր պիտի լինեն և աշխատանքային նորմաները, սակայն այդ նորմաները պիտի հավասար լինեն լավագույն հարվածայինների միջին նորմային և վոչ ցածր. միաժամանակ չի կարելի շատ բարձր նորմաներ հիմք ընդունել, քանի վոր այդ դժվար նորմաները որպամազրություն առաջ կրեն հետ դառնալ գործարեց զեպի որավարձի սիստեմը:

Սոցմբցման տնտեսա-քաղաքական պայմանադրերը պիտի քննության առանձին արտադրական խորհրդակեցություններում ու մրցողների (կոլեկտիվի, բրիգադի) ընդհանուր ժողովում պայմանադրի բոլոր կետերը պիտի լայնորեն բացատրվի և մրցման պայմանադրերը կոստարելու համար մորիլիքացիայի պիտի յենթարկվի կոլտնտեսականների հասարակական կարծիքը:

ՍՈՑՄԲՑՈՒՄԸ ՊԻՏԻ ԴԵԿԱՎԱՐԵԼ, ԳԼԽԱՎՈՐԵԼ.

Մինչեւ հիմա յև սոցմբցման գործում ամենագլխակոր բացը նրա անկազմակերպվածությունն է, սոցմբցումը չգելիավարելը, չըլխափորելը, այն ինքնահոսին քողնելն է, վորը սոցմբցման աջ ոպորտունիստական թերապնահատումն ցայտուն արտահայտությունն է հանդիսանում: Յեվ իսկապես այն ըջաններում ու գյուղում, ուր աջ ոպորտունիստներին հաջողվել և խցկվել կոլտնտեսական դեկավար ապարատներում, սոցմբցումը բոլորսին անաեւվել, մոռացվել և (Դարձագյաղ, Ղարաքիլսայի և այլ ըջանների մի շաբթ կոլտնտեսություններում, «Անաստվածում» և այլն):

Այլ կոլտնտեսություններում ինքնահոսն արտահամովել և այլ ձեվով, սոցմբցմատեր մատեցել եթ հե-

վականորեն, կնքել են պայմանագրեր և լուր ամենքի հայուարարել են իրենց հարվածային (նույնիսկ թերոթերում) ամբողջ բրիգադով, կոլեկտիվով կամ անհատապես, սակայն գործնականում վոչնչով չեն արդարացրել հարվածային կոչումը, կամ չեն գլխավորել, այդ շարժումն ու գործը թողել են ինքնահոսի:

ԿՈՄԲՀԻԶՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Շատ կոմբջիջներ, կոլտնտվարչություններ իրենց պատասխանառու չեն համարում սոցմբցման ու հարվածայնության կազմակերպվածության համար, մինչդեռ առաջին հերթին նրանք են պարտավոր դեկավարել ու գլխավորել սոցմբցումն ու հարվածայնությունը: Սոցմբցման լավ կազմակերպման համար պատասխանառու յե առաջին հերթին կոմբջիջը, նրա յուրաքանչյուր անդամ, վոչ մի գյուղկոմունիստ չպետք և դուրս մնա կոլտնտեսության հարվածայինների շարքերից, նրանցից յուրաքանչյուրը սեփական որինակով պետք և սոցմբցման ու հարվածայնության ծավալմանը նեղատի, պետք և հարվածայինները լինեն վոչ միայն գաւառում աշխատողները, այլ և կոլտնտեսական ու մյուս ապարատներում աշխատող կոլտնտեսականները, կոլտնտեսությունից, կոլտնտեսության Փիզիքական աշխատանքից խուսափողները տեղ չպիտի ունենան կուսակցության շարքերում. զյուղկոմբջիջները պետք և հեռացնեն կոլտնտշինարարույթան փրանքը լիովներին և կուսակցության շարքերը խտացնեն հարվածայիններով:

Սակայն անձնական որինակը միայն բավական չեն, միայն իր նորմաները գերակատարել և ուրիշ բանի մասին չմոռնել կոմունիստական չե յուրաքանչյուր գյուղ

կոմունիստաց հարվածային դրեզ պետք ե կազմակերպի , պետք ե պայմանագրեր կապելու , անհատական կամ բրիգադային , կուեկտիվ մրցում պիսելու նախաձեռնուած հանդիսանա , գյուղկոմունիստները և կուսրջիջները պիտի հսկեն , վոր ճիշտ հաշվառում կատարվի , վոր ժամանակին ստուգումներ կատարվեն , վոր պայգեմատություններն ու մրցանակաբաշխումը չուշանա , վոր հարվածայիններին հատկացված արդյունաբերական գեֆիցիտային ապրանքներն այլ նպատակներով չծախսվեն , վոր հարվածայինների շարքերը չփակվեն կեղծ հարվածայինները :

Միաժամանակ կուսրջիջը պետք ե հաշվիտվություն պահանջի կոլտնտվարչությունից , գաշտավարներից , կոմյերիտրջիջից , գյուղնորհրդից , պատուի լրադրից և մյուս կազմակերպություններից սոցմրցումն ու հարվածայնությունը ծավալելու համար կատարած աշխատանքի մասին :

ԿՈՄՍՈՄՈԼԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱԶԱԿԻՑԸ

Այն կոլտնտեսություններում ու գյուղերում , ուր կուսրջիջներ չկան այդ բոլոր պարտականությունները պիտի կատարի կոմյերիտրջիջը , իսկ ուր կուսրջիջը կա , կոմսումուլը նրան ոգնականը պիտի հանդիսան :

Կոմյերիտականները բոլորը , կոլտնտեսության մեջ , պետք ե լինեն հարվածայիններ , լոգիերը , սիմուլյանտները , գյուխ պահողները պետք ե դուրս արվեն կոմսումուլը և կոմսումուլն իր շարքերը պիտի ընդունի հարվածային կոլտնտեսական յերիտասարդներին :

Կոմբամուլը , վորպես ոքինակ պետք ե կոմյերիտա-

կան հատուկ ողակներ , բրիգադներ կազմակերպի , կոմսումուլը բուքսիր՝ ողնություն կազմակերպելու նախաձեռնողը պիտի հանդիսանա , կոմսումուլը շարաթորյակների ավրաների պիտի դնա կոլտնտեսության ճեղքածածքները ծածկելու համար :

ԿՈԼՏՆՏԵՍՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՈՐՊԵՏԱԿԱՆ ՍՈՅՄՐՅՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱԶՄՄԱԿԵՐՊԻՉՐՆԵՐ

Կոլտնտվարչությունները , վորպես կոլտնտեսության զեկավար որդան , սոցմրցման անմիջական կազմակերպուղներն ու ընթացք տվողները պիտի հանդիսանան , կոլմարչությունն ե , վոր ընդհանուր արտադրանիան խորհրդակցություններում պիտի դնի սոցմրցման և հարվածայնության վերաբերող լինդիրներ , նա ուետք ե արտադրական հանձնաժողովների ու խորհրդակցությունների միջոցով հաշվառման յենթարկի մրցումը , գործարքի ու հաշվառման կարգավորմամբ հնարակարություններ ստեղծի պարզելու մրցման արդյունքները , Կոլտնտվությունն ե , վոր պիտի ընտրի հանձնաժողովներ , պատգամամավորություններ ստուգելու սոցմրցման արդյունքները և մրցանակաբաշխություն կատարելու , իսկ մինչ այդ կարմիր ու սեվ տախտակներում սիրտի ցուցահանի մրցման ընթացքում հետ մնացողներին ու հարվածայիններին , պայքարի անփութության , լուգրության գեմ : Կոլմարչությունն ե , վոր պիտի գործականում իրականացնի «ով շատ և լավ աշխատի , նա շատ կատանա , ով չի աշխատի , նա վոչինչ չի ստանա» լոգունդը . գրա համար նա արդյունաբերական ալյանքները բաշխելիս , ավանաներ տալիս և բերքի ու յեկամականների վերջնական բաշխման ժամանակ ուետք ե

նկատի ունենայ յուրաքանչյուր կոլանտեսականի աշխարհի թիվը, նրա աշխատանքի վորակը և ըստ այնձել բաժանում կատարի: Կոլոնտայարչությունը պետք է հսկի և թույլ չտա սոցմբցումը՝ ժամանակավոր կամպանիայի վերածել, սոցմբցման ժամկետները լրանալիս նա պիտի կաղմակերպի նոր պայմանագրությունները: Կոլվարչությունը միաժամանակ ինքը, վորպես մրցող կոլտնտեսության դիկավար որգան (Հարեւան Կոլիոնդի, սովորովի, գործարանի հետ) պիտի և հարվածային լինի և մրցման համար պայմաններ ստեղծի կոլեկտիվում:

Կոլտնտավարչությունների անմիջական պարտականությունն է, և այս նրանք յերբեք չպիտի ճշգրիտ, պարզեցարման ֆոնդ կաղմակերպելն ու պարզեցարություններ կատարելը: Պիտի հիշել, վոր պարզեցարությունների համար ծախոված գումարներն իզուր չեն կորչում, յեթե պարզեցարությունը կատարվում է ճիշտ:

ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ

Սոցմբցման ու հարվածայնության ծալալման դուրս գնական դիրք ունեն խաղալու և մամուլը, գյուղական ու շրջանային թերթերը և իրենք դյուլթղթակեցները:

Ամենից առաջ «ամեն մի գյուղբդբակից պիտի լինի հարվածային և ամեն մի հարվածային՝ բդբակից»: Իսկ ինչ և նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր ամեն մի թղթակից իր որինակելիությամբ, հարվածային աշխատանքով կոլտնտեսության բոլոր աշխատանքների ասպարեզում պետք է լինի առաջինը: Այդ նշանակում և, վոր ամեն մի թղթակից պիտի շահագրղրված լինի սոցմբցման և հարվածայնության ծալալման դործով,

թղթակիցը չպիտի լրի այն ժամանակ, յերբ սոցմբցությունը գլխավորելու փոխարեն կոլվարչությունը կամ յյուս կազմակերպություններն այն թողնում են ինքնահճուի, նա պիտի և պայքարի սպորտունիզմի, սոցմբցումը քերագնահատելու կամ աղավաղելու ամեն մի յերեվույքի դեմ:

Սակայն թղթակիցը մենակ չպիտի պայքարի այլ թերությունների գեմ, նա պետք է մորիվազիայի յենթարկի կոլտնտեսական վողջ մասսային կուսակցութայն գլխավոր գծի կենացղրծման համար. պատի թեր թերը պետք է իրենց այդ պայքարով մասսայի կազմակերպիչը լինեն: Ամեն մի ճեղքվածք, ամեն մի բաց, պատի թերթը պիտի նախատեսի ու ժամանակին ահազանդ տա. առանց խնայելու պետք է մերկացնել բոլոր լողիններին ու զլուխ պահողներին, գործը ճգնապող, ինքնահճուի մատնող սպորտունիստներին, և ենեղուզականունեն պայքարը տանել մինչև վերջ թույլ չտալով, վոր սոցմբցումն ու հարվածայնությունը թուլանա ու մոռացի: Միաժամանակ թերթում պիտի լուսաբանի և աշխատանքի դրական փորձը, սոցմբցման ֆրոնտում ունեցած նվաճումները, պետք է թերթերում մասսայականացնել հարվածայիններին և տրամադրություն ու պայմաններ ստեղծել այդ շարժումը ծալվակիու:

Գյուղական գուղները նույնպես, վորպես գյուղի իշխանություն, վոր հսկում, ղեկավարում և կոլտնտեսության աշխատանքը ինչպես և ծալվալում մրցում անհատական սեկտորում, աշխանացանի պլանների կատարման համար պետք և շահագրղրված լինի սոցմբցման ծավալմանը կուտանսություններում և ուժանդակություն ցույց տա այդ նպատակով:

ՊԱՅՔԱՐԵՆՔ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Զնայո՞ծ սոցմքան ընդհանուր անկազմակերպված ծության բայլչևիկյան յերկրորդ գարնանացանի, մեղ մոտ միշտ շարք կոլտնտեսություններ՝ Սարդարաբադ, Ն. Խաթունարի, Ռևունլար, Թուոկուլու, և այլն հերոսական պայքար տարան առաջնության համար։ Աշնանացանի ընթացքում այդ մրցումը պետք է ավելի կազմակերպված բնույթ ունենա, բերքի տոնին նվիրատվությունների համար մեծ դուքարներ են հատկացվում։ Անդբարամբակլոմն արդեն նշանակել ե բամբակի մթերման պլանները գերակատարող կոլտնտեսությունների պարզեվարության համար մրցանակներ մինչեվ 5000 ռ.։ Կազմված ե աշնանացանի պլանը գերակատարող կոլտնտեսությունների պարզեվարության համար մրցանակներ մինչեվ 5000 ռ.։ Կազմված ե աշնանացանի պլանը գերակատարող կոլտնտեսությունների պարզեվարության համար մրցանակներ մինչեվ 5000 ռ.։ Կազմված է աշնանացանի պլանը գերակատարող կոլտնտեսությունների պարզեվարության համար մրցանակներ մինչեվ 5000 ռ.։ Կազմված է աշնանացանի պլանը գերակատարող կոլտնտեսությունների պարզեվարության համար մրցանակներ մինչեվ 5000 ռ.։ Կազմված է աշնանացանի պլանը գերակատարող կոլտնտեսությունների պարզեվարության համար մրցանակներ մինչեվ 5000 ռ.։

Հայաստանի արհմիությունների խորհրդի փոխանձիկ դրոշը, վորայժմ Սարդարաբաղման ե, կանցնի այն կոլխոզին, վորն աշնան գյուղատնտեսական կամպունի ընթացքում, ծավալելով սոցմբումն ու հարկածայությունը, կունքակատարի բերքահալաքի, վարությանը, միաժամանակ մասնակիւթյանը։


Ահա այդ մրցություններին պիտի զուրո դան մասնակցելու մեր լավագույն կոլտնտեսությունները, իսկ ամեն մի կոլտնտեսություն կարօղ է շատ կարն ժամանակում դառնալ լավ և որինակիլի՝ սոցմքան ու հարկածայության ծավալմամբ, այն ճիշտ կազմակերպելով։

Ամբողջ Խորհրդային Միության բոլոր անկյուններում կոմունիստական կուսակցության զեկավարությամբ կատաղի պայքար է ծավալված ժողովրդական անտեսության հնգամյա մեծ պլանը 4, 3 ու կես տարում կատարելու համար։ Հնգամյա պլանով նախտեսված տեմպերից մենք առաջ ենք սլացել արգյունաբերության թե գյուղատնտեսության բոլոր ճյուղերում և այդ չնորդիվ պիտապորապես նաև նրա, վոր բանվորական ու կուտնահանական միլիոնների համար «ԱՇԽՍԱՆՔ ԴԱՐՁԵԼ ե ՊԱՏՎԻ, ԱՐՃԱՆԱՎԱՏՎՈՒԹՅԱՆ, ԶԵՐՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾ» (ՍՏԱԼԻՆ)։—սոցմքան ու հարկածայության չնորդիվ, չնորդիվ նրա, վոր ամեն մի բան վոր, ամեն մի կոլտնտեսական զգում և և հավատացած ե, վոր չի աշխատում շահագործող ուրիշ մի դասակարգի համար, զիտակցում ե, վոր կապիտալիզմի, դասակարգացնի թշնամու, կուլտակիւդում հաղթանակ տանելու համար անհրաժեշտ և ավելի բարձր տեմպեր վերցնել, ավելի շուտ ինդուստրացման յենթարկել մեր յերկիրն, ավելի արագ կունքակտիվացնել դյուզը։

Հնգամյակի 3-րդ վճռական տարում մենք ավարտում ենք սոցիալիզմի հիմքի կառուցումը, մենք հիմնականում ապահովում ենք հնգամյա պլանի ժամկետից առաջ գերկատարումը։ Կունքակտիվացման հիման վրա մենք ամուր բազա յենք ստեղծում կուլակի, վորակու կապիտալիստական վերջին դասակարգի, մեկփելացեայի համար, պայմաններ ենք ստեղծում սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար։

Հնգամյա պլանի իրադորումը բազմապատկում է Խորհրդային Միության պաշտպանումակությունը կապիտալիստական հարձակումների դեմ և բոլոր հնարավություններով պաշտպանում սոցիալիզմի կառուցումը

Հեք յերկրում : Ահա ինչու սոցմբցումն ու հարվածայն նություննը պետք է դպրոնան աշխատանքի մշտական ժամանակում , աշխատանքի սոցիալիստական ձև և վոչ մի եղանակառություն , վոչ մի բրիգադ , վոչ մի ուղակ և զարգացնական գուրս չպիտի մեռա հարվածայն ներք , աշխատանքն արժանապատվություն . Համարա հերոսների շարքերից :



Գիր 5 կ. (1 մ.)

В. Ог.

КАК ОРГАНИЗОВАТЬ СОЦСОРЕВНОВАНИЕ И УДАРНИЧЕСТВО В КОЛХОЗАХ

Госиздат ССР Армении

Эривань—1931

ՀՀ Ազգային գրադարան



NL0204094